

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 11

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

19.06.2017թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Ա.Դարբինյանը - մարզպետի տեղակալ
- Տ. Բադոյանը - մարզպետի տեղակալ
- Հ.Թադևոսյանը - մարզպետի տեղակալ
- Ն.Սարգսյանը - աշխատակազմի ղեկավար
- Վ.Խաչատրյանը - աշխատակազմի ղեկավարի տեղակալ
- Հ.Պապոյանը, Ս.Լամբարյանը, Մ.Սայադյանը, Ա.Ջանազյանը, Դ.Մանուչարյանը, Գ.Հակոբյանը, Ա.Օհանյանը, Լ. Բերոյանը, Ա.Սահակյանը, Ս.Ղուբաթյանը, Ա.Ադրյանը, Վ.Դոխոյանը, Ս.Խեչումյանը, Հ. Մկրտչյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
- Լ. Ապլանյանը - մարզպետի խորհրդական
- Ա.Մանուկյանը - մարզպետի խորհրդական

Օրակարգում՝

1. ա) ՀՀ Վարչապետի Լոռու մարզ կատարվելիք այցի մասին
բ) Ս.թ սեպտեմբերին նախատեսվող սմարթ- դասարանների աշխատանքների մասին /Ա. Նալբանդյան/
2. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին /Ջեյ.Ն.Սարգսյան/
3. Համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման մասին /Ջեյ.Հ.Պապոյան/
4. Բուժաշխատողի օրվան նվիրված անցկացվելիք միջոցառումների մասին /Ջեյ.Ս.Լամբարյան/
5. ա) «Ազգ-բանակ» միջոցառումների ընթացքի և հետագա աշխատանքների մասին
բ) Լոռու մարզի դպրոցականների ամառային հանգստի կազմակերպումը Հանքավանի «Լուսաբաց» մանկական առողջարարական ճամբարում անցկացնելու մասին /Ջեյ.Մ.Սայադյան/
6. «Մաքուր Հայաստան» ծրագրի շրջանակներում փակման ենթակա և կոնսերվացման դժվարություններ պարունակող աղբավայրերի աշխատանքները պատշաճ կազմակարպելու և աղբահանության ծառայություններն ապահովելու նպատակով համապատասխան ազդակիր համայնքներին անհրաժեշտ պետական օժանդակություն տրամադրելու մասին /Ջեյ.Ա.Օհանյան/
7. Սյունիք կատարված այցի փորձի փոխանակման աշխատանքների մասին /Ջեյ.Ս.Խեչումյան/
8. Մակեդոնիա և Ալբանիա կատարված այցի արդյունքների մասին /Ջեյ.Հ.Մկրտչյան/
9. Մարզում գյուղատնտեսական աշխատանքների կատարման ընթացքի մասին /Ջեյ.Գ. Հակոբյան/
10. Այլ հարցեր

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց՝

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա.Դարբինյանին, Հ.Թադևոսյանին, Տ.Բադոյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Հ. Պապոյանին՝

Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել մարզի համայնքների կողմից սեփական եկամուտների հավաքագրման կիսամյակային ցուցանիշները ապահովելու ուղղությամբ:

2. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին՝ ՀՀ Վարչապետի Լոռու մարզ կատարելիք այցի շրջանակներում սլայդների ձևով նախապատրաստել և ներկայացնել ոլորտին վերաբերվող համեմատական տեղեկատվություն:

3. ՀՀ Լոռու մարզպետի խորհրդական Լ.Ասլանյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մ.Սայադյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Հ.Պապոյանին՝

Քննարկել և մեկօրյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն և առաջարկություններ նոր կառուցվող սմարթ- դասարանների կազմավորման վերաբերյալ:

4. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մ. Սայադյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Ա.Խեչումյանին՝

Ներկայացնել տեղեկատվություն Լոռու մարզի համայնքներում միջազգային կառույցների հետ համագործակցությամբ, կազմակերպվող ամառային ճամբարների վերաբերյալ:

5. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա.Ջանազյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին, աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա.Օհանյանին՝

Մարզի համայնքներից պահանջել և 5-օրյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն համայնքներում գործող տնտեսվարող սուբյեկտների հետ կնքված աղբահանության ծառայությունների մատուցման պայմանագրերի և դրանց կատարման ընթացքի վերաբերյալ:

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ



Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ